



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ Բաղադրյալ հատուկ անունների
կազմության**

**առանձնահատկությունները և ուսուցման
մեթոդիկան ԱՌԱՐԿԱ Հայոց լեզու**

**ՀԵՂԻՆԱԿ Սահակյան Սվետլանա
ՄԱՐԶ Արմավիր**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Արշալույսի Ս.
Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ**

Բովանդակություն

Ներածություն -----	2
Գլուխ 1. . Բաղադրյալ հատուկ անունների հարցի շուրջ	
1.1 Հատկանունների ծագումը և կազմությունը -----	5
Գլուխ 2. Բաղադրյալ հատուկ անունների ուսուցումը հանրակրթական դպրոցում	
2.1 Հանրակրթական դպրոցի հայոց լեզվի ծրագրում թեմայի ուսուցմանը ներկայացվող պահանջները -----	14
2.2 Հասարակ և հատուկ անունների արտահայտության տարբերակման ուսուցումը -----	19
Եզրակացություններ -----	36
Գրականության ցանկ -----	37

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի ժամանակաշրջանում, երբ տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործման շնորհիվ կյանքն առաջ է ընթանում աննախադեպ արագությամբ, առավել կարևորվում է ուսուցման գործընթացի զարգացման անհրաժեշտությունը:

Փոխվել են ժամանակները, փոխվել են նաև ժամանակի մարտահրավերներն ու թելադիր պահանջները: Հայոց լեզվի և գրականության առարկայական չափորոշիչի համաձայն՝ հայերենի ուսուցումը հանրակրթական դպրոցում ենթադրում է <<...ուսուցման միատեսակ վերջնական արդյունքներ՝ արդի հասարակության մեջ ազատ ու նպատակահարմար հաղորդակցվելու, սեփական մտքերը գրավոր և բանավոր շարադրելու, հանրային կյանքի ամենատարբեր բնագավառներում խոսքային գործունեություն իրականացնելու միասնական կարողությունների ու հմտությունների, գրական գիտելիքների ու ճաշակի մշակման տեսանկյունից>>¹:

Լեզվի ուսուցումը առաջին հերթին միտված է սովորողների լեզվամտածողության, մտավոր և ստեղծագործական հաղորդակցական համակարգի կառուցվածքի մասին գիտելիքների ձեռքբերմանը, խոսքային գործունեության ընթացքում մայրենի լեզվի հարուստ հնարավորությունները լիարժեք, գրագետ կիրառելու կարողությունների ձևավորմանը:

Ժամանակակից զարգացող աշխարհում ոչ միայն զարգացած և գիտելիքներով օժտված, այլև հաղորդակցվող, համագործակցային հմտություններով, հարուստ բառապաշարով ու զարգացած խոսքով գրագետ քաղաքացիների կրթումն ու դաստիարակումը դպրոցի ու մանկավարժների գերագույն նպատակն է ու խնդիրը:

Չետագոտության արդիականությունը

Բաղադրյալ հատկանունների կազմության, ուղղագրության իմացությունը, թե-մայի ուսուցման մեթոդների, ձևերի, եղանակների ընտրությունն ու մշակումը արդիական է. այն բխում է հանրակրթության հայոց լեզվի բնագավառին ներկա-յացվող պահանջներից:

Չետագոտության նպատակն է պատկերացում կազմել լեզվի ձևաբանական կառուցվածքի և նրա տարրերի մասին,

իմանալ և ճիշտ կիրառել բաղադրյալ հատուկ անունները գրավոր և բանավոր խոսքում,

մշակել հատկանունների կազմության և ուղղագրության ուսուցման այնպիսի համակարգ, որը կնպաստի թեմայի արդյունավետ ուսումնասիրմանը:

Հ. լեզվի ուսուցման նպատակն է աշակերտին սովորեցնել հայոց լեզվի հնչյունաբանությունը, բառագիտությունը, քերականությունը, ճանաչել տալ հայերենի հնչյունաբանությանը, բառագիտությանը, քերականությանը բնորոշ հատկանիշները,

¹ Հայոց լեզու, գրականություն: Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ (1-9-րդ դասարաններ), Ե., 2011, էջ

դրանց դասակարգման հիմունքները, մշակել ճիշտ խոսելու և գրելու կարողություններ:

Լեզվական և ձևաբանական գիտելիքներն ունեն ուսուցողական և զարգացնող լայն հնարավորություններ. դրանք նպաստում են սովորողների մտավոր զարգացմանը, բարենպաստ պայմաններ ստեղծում նրանց բառապաշարի հարստացման ու խոսքի զարգացման համար:

Չեռագոտության խնդիրները.

1. ուսումնասիրել և դիտարկել հատուկ անունների կազմությաունը, ծագումը ժամանակակից հայոց լեզվում, հիմնավորումը դրանց ուսումնասիրության անհրաժեշտությունը:

2. Ներկայացնել բաղադրյալ ածականների գրության սկզբունքները:

3. Ժամանակի թելադիր պահանջներին համապատասխան առաջարկել ուսուցման ակտիվ մեթոդներ, որոնք կարող են առավել դյուրին դարձնել բաղադրյալ հատուկ անունների ուսուցման գործընթացը:

Չեռագոտական մեթոդները

1. Դիտում

2. Չրույց

3. Զննարկում

Չեռագոտության գործնական նշանակությունն այն է, որ աշխատանքը ուսումնական բնույթ ունի, ուստի կարող է օգտակար լինել հայոց լեզվի դպրոցական նաև բուհական ուսուցման համակարգում:

Չեռագոտական աշխատանքը բաղկացած է՝

Ներածությունից, 2 գլուխներից, երեք ենթագլուխներից, եզրակացություններից և օգտագործված **գրականության ցանկից:**

Ընդհանուր ծավալը 38 համակարգչային էջ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Բաղադրյալ հատուկ անունների հարցի շուրջ

1.1 Հատկանունների ծագումը և կազմությունը

Լեզվի ու նրա զարգացման օրենքները սերտ կապի մեջ են ժողովրդի պատմության հետ: Սրա էությունն այն է, որ լեզվի տարատեսակների առաջացման, նրանց փոխազդեցության ու փոխհարաբերության փոփոխության հարցերը կապված են ժողովրդի պատմության ընթացքի հետ: Սա անվիճելի ճշմարտություն է: Սակայն այդ կապի կոնկրետ դրսևորումները ցուցադրելու մեջ լեզվաբանը դժվարություններ ունի. «Մենք հնարավորություն չունենք մեր նպատակի սահմաններում մանրամասնորեն ցուցադրելու լեզվի և ժողովրդի պատմության կապը», – գրում է նա և առաջարկում է նկատել, որ իր ողջ շրջանաբաժանումը տոգորված է ժողովրդի պատմության հետ ունեցած կապով ²:

1. Հայոց լեզվի գրային շրջանի պատմության սկիզբը հայոց պատմության հին շրջանի սկիզբն է V դար ,
2. կիլիկյան թագավորության շրջանը համընկնում է միջին հայերենի ծաղկման ժամանակաշրջանին XI-XIV դարեր ,

² Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 34:

3. աշխարհաբար կամ նոր հայերենի սկզբնավորման ժամանակաշրջանը հայոց պատմության նոր շրջանի սկիզբն է XVIII-XIX դարեր ,

4. հայոց պատմության նորագույն շրջանը համընկնում է ժամանակակից հայերենի ենթաշրջանին 1920-ական թվականներից մինչև մեր օրերը :

Մարդը մտածել է անուններ տալ ոչ միայն իր շրջապատող բույսերին, կենդանիներին, գետերին, սարերին, այլև իր գավակներին:

Անձնանունների մի խումբն առաջացել է ծնողների ցանկություններից, դրանք բարի կամեցողություններ են իրենց երեխաների ապագան երջանիկ ու բախտավոր տեսնելու նկատառումներով: Այստեղ մարդը մտածել է, որ իր տված անունը կարող է ճակատագրական դեր խաղալ ուստի և ստեղծվեցին Երջանիկ, Ազատ, Նահապետ և մյուս այն անունները, որոնք ինչ-որ նշանակություն ունեին: Հասարակ ժողովրդից դիրքով բարձր գտնվողները ցանկանում էին տարբերվել

ևսև իրենց անուններով: Ազնվականներն ու բարձրաստիճան անձինք իրենց անուններին սկսեցին ավելացնել վսեմությունն ու ազնվականությունը ընդգծող մակդիրներ: Այդ մակդիրները պաշտոնի, զբաղեցրած դիրքի երբեմն ևսև մասնագիտության, արհեստի, զբաղմունքի անուններն էին որ կպցնում էին ազգանուններին ու տոհմանուններին: Օրինակ՝ պարզ ազգանունների կողքին հայտնվում են մելիք, աղա, շահ, խան, տեր, ամիր, պաշտոն նշանակող այլ բառեր, և ծնվում էին Մելիք-Հայրապետյան, Տեր-Թադևոսյան, Ամիր-Ազիզյան, Էլիզխանյան, Ամիրխանյան, Շահ-Թովմասյան և այլ նման ազգանուններ:

Մեծ տարածում են գտել ևսև թագավորների կողմից սիրված պաշտոնյանների տոհմի արտոնյալ կացությունը բնութագրող ազգանունները, որպիսիք են՝ Շահզիզյան՝ «շահին սիրելի, շահին թանկագին», Շահվերդյան՝ «շահից շնորհված, շահից տրված», Շահպարոնյան՝ «շահի պարոններից» կամ «շահի համար պարոնության արժանի» ցեղից և այլն, Աղաջանյան՝ «աղայի հոգի ունեցող» և այլն:

Մի խումբ ազգանուններ առաջացել են արհեստներով զբաղվող գերդաս-տաններին բնութագրելուց, որպիսիք են՝ Բրուտյան, Մազմանյան, Նալբանդյան, Դերձիկյան, Ֆովիվյան, Դարբինյան, Լպուտյան, Ներկարարյան, Ժամկոչյան, Քոշյան, Կոշկարարյան, Հացագործյան, Մեղվապանյան, Դպիրյան, Վարդապետյան և այլն³:

Ժողովուրդները անձնանունները փոխ են առնում մեծ մասամբ կենդանի մեր-ծեցումների ժամանակ, սակայն երբեմն, հարևանի լեզուն չհասկանալով անունը փոխ է առնվում հոլովված ձևով, ոչ թե ուղիղ ⁴ :

³ Ն. Մկրտչյան, Բառերի կենսագրությունից, Ե., 2004, էջ 44:

⁴ Ն. Մկրտչյան, Բառերի կենսագրությունից, Ե., 2004, էջ 45:

Գոյական են կոչվում այն բառերը, որոնք անվանում են առարկա կամ որպես առարկա մտածված երևույթ⁵ :

Գոյական խոսքի մասի մեջ են մտնում արմատային իմաստներով թե՛ գոյականները, թե՛ բայանունները, որոնք միասնականորեն գոյական են համարվում քերականական նշանակությամբ՝ հավասարապես պատասխանելով ո՞վ, ովքե՞ր, ի՞նչ, ինչե՞ր հարցերին: Իմաստային տեսակետից գոյական անվան մեջ մտնող բառերի ընդհանուր բնորոշումը առարկայական հասկացությունն ցույց տալն է: Լեզվի պատմական զարգացման ընթացքում տեղի են ունեցել բառերի ձևաբանական իմաստների և արժեքների տեղաշարժեր:

Գոյական անվան ներխոսքիմասային տեղաշարժերն ուսումնասիրելիս կարելի է առանձնացնել պատմական երեք ժամանակաշրջան՝ **հին հայերեն (գրաբար), միջին հայերեն, ժամանակակից հայոց լեզու:**

Լեզուն անընդհատ գտնվում է փոփոխությունների մեջ և այդ փոփոխությունները կատարվում են այնքան երկար ժամանակամիջոցում, որ լեզվի պատմության մի ժամանակահատվածում դրանք նկատելի չեն լինում:

Մի շարք տեղանուններից, որոնք ունեցել են երկու երեք և ավելի տարբերակներ ընտրվել են վերջին 10-15 տարիների ընթացքում կիրառվողները:

Օրինակ՝ մի շարք բնակավայրեր, սարեր, գետեր պատմական տարբեր ժամանակահատվածներում ունեցել են ոչ միայն հայերեն, այլև թուրքերեն անվանումներ ինչպես՝ Արագած - Ալագյազ, Արցախ - Ղարաբաղ, Վանաձոր - Ղարաքիլիսա և այլն:

Հայկական անվան փոխարինումը թուրքականով կարող է բացատրվել երկու պատճառով. մի դեպքում հայկական տեղանունը, ենթարկվելով թուրքերենի արտասանական առանձնահատկություններին, կրել է համապատասխան փոփոխություններ, ինչպես՝ Արագած –Ալագյազ, Չմյուռնիա - Իզմիր, մյուս դեպքում այն փոխարինվել է թուրքերեն անվանումով, ինչպես՝ Արցախ - Ղարաբաղ (<<սև այգի>>), Ծաղկաձոր - Ղարաչիչակ (<<ծաղիկների ձոր >>) և այլն:

Գ. Ղափանցյանը, խոսելով հասարակ անուն - հատուկ անուն փոխանցման մասին, նշում է, որ հատուկ անունն առաջանում է հասարակ անունից, տեղի է ունենում բառիմաստի նեղացում, իսկ երբ հասարակ անունն է առաջանում հատուկ անունից, տեղի է ունենում բառիմաստի ընդլայնում⁶:

⁵ Մ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1975, էջ :

⁶ Գ. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, Ե., 1939, էջ 226:

Այս երևույթը քննում է նաև Մ. Աբեղյանը՝ նշելով, որ հատուկ անուններն առաջանում են հասարակ անունից՝ բառիմաստի նեղացմամբ ինչպես՝ Ծաղիկ, Գոհար, Հասմիկ, Լալա, Մանուշակ և այլն:

<<Հայոց անձնանունների բառարանում>>, անդրադառնալով անձնանունների ծագման խնդրին, Աճառյանը գրում է. <<Բոլոր հատուկ անունները, լինեն նրանք մարդու թե

տեղի, կազմված են հասարակ գոյականներից: Ամեն հատուկ անուն մի բառ է, նշանակությամբ օժտված հասարակ անուն>>⁷:

Նա նշում է նաև, որ հայերենում փոխառյալ անձնանունները համապատասխան լեզուներով ստուգաբանելիս պարզվում է, որ դրանք ևս ծագել են հասարակ անուններից: Նա հատուկ անունները բաժանում է երկու խմբի՝ տեղանուններ և անձնանուններ: Նրա ասելով՝ տեղանուններն ավելի հարատև են ու հաստատուն, քան անձնանունները:

Գոյական խոսքի մասի սահմաններում լիակատար տեղաշարժեր են համարվում անցումը հասարակ գոյականից հատուկին, հատուկ գոյականից հասարակին:

Բուսական աշխարհի (բույսերի ու ծաղիկների) անունները, կենդանական աշխարհի անվանումները, կյուրների անվանումները, մարդու զբաղեցրած պաշտոնը մատնանշող գոյականները, աշխարհագրական հասարակ անվանումները հասարակ գոյականների այն խմբերն են, որոնք անցել են հատուկ տեսակին:

Տեղանուններ են երկրների, գյուղերի, քաղաքների, լեռների, դաշտավայրերի, օվկիանոսների, լճերի, գետերի անվանումները: Տեղանուններն առաջացել են հասարակ անուններից՝ իմաստափոխության ճանապարհով: Մի շարք տեղանուններ պայմանական անվանումներ չեն, ինչպես անձնանունները, քանի որ կա տրամաբանական կապ տվյալ տեղանվան և տեղի միջև, ինչպես՝ Ձորաշեն, Անտառուտ, Այգեձոր...

Տեղանունն իր մեջ կրում է նաև հասարակական իմաստ՝ իր մեջ արտացոլելով տվյալ ժողովրդի պատմությունը, մշակույթը, սովորությունները, շփումներն այլ ժողովուրդների հետ: Տեղանուն հատուկ անվան այն տեսակն է, որն ավելի հաստատուն և ավելի տևական բնույթ ունի: Սակայն տեղանունն էլ կարող է ժամանակի ընթացքում փոխվել⁸: Հայաստանում կան բնակավայրեր, որոնք իրենց պատմության ընթացքում ունեցել են երկու, երեք երբեմն էլ ավելի անվանումներ:

Օրինակ՝ Գավառ – Զյավառ – Գեղարքունիք - Կամո, Վաղարշապատ - Արմավիր և այլն:

⁷ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե. Ե., 1962, էջ 340:

⁸ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե. Ե., 1962 էջ 344:

Հայկական բազմաթիվ տեղանուններ ենթարկվել են թուրքերենի ազդեցությանը, քանի որ թուրքերը, լինելով մեր թշնամին, գրավելով որևէ քաղաք կամ գյուղ, կամ դրան տվել են նոր թուրքական անվանում, կամ էլ աղավաղել են հինը՝ դրան տալով թուրքական արտահայտություն:

Ժամանակակից հայերենում բոլոր տեղանուններն ունեն հայերեն անվանումներ: Աստղագիտական անունները, եթե վերցված են իրենց ընդհանուր իմաստով (երկիր, արև, լուսին) հասարակ անուններ են, իսկ եթե վերցված են որպես տիեզերական մարմինների, մոլորակների անուններ, ապա աշխարհագրական հատուկ անուններ են, ուստի և տեղանուններ:

Անձնանունները մարդկանց տրվող անուններ են, որ ժամանակի ընթացքում ամրանում են տվյալ ժողովրդի բառապաշարում՝ անցնելով սերնդից սերունդ: Սակայն դարերի ընթացքում անձնանունը կարող է հնանալ դուրս գալ գործածությունից և անգամ մոռացվել:

Այն բոլոր անվանումները, որոնք լեզվում կատարում են հատուկ անվան գործառույթ, բայց իրենց անվանական գործառույթամբ և ընդգրկումով տարբերվում են անձնանուններից ու տեղանուններից, պայմանականորեն կոչվում են հատուկ անվանումներ⁹:

Տեղանուններն են երկրների, քաղաքների, ծովերի, դաշտավայրերի, լճերի, լեռների ու աշխարհագրական այլ վայրերի անվանումները:

Հատուկ անվանումներ են կազմակերպությունների, հիմնարկ ձեռնարկ-կուրյունների, ուսումնական հաստատությունների, ամսագրեր, լրագրերի, արվեստի, գրականության ստեղծագործությունների, գիտական աշխատութ-յունների, շքանշանների անվանումները:

Հատուկ անուն չենք համարում հատուկ անվանումները: Դրանք փոխանցումներ են հասարակ անուններից, սակայն իրենց պայմանական գործածության և իմաստային առանձնահատկությունների պատճառով էականորեն տարբերվում են բուն հատուկ անուններից (անձնանուններից և տեղանուններից):

Քանի որ հատուկ անունները կազմությամբ լինում են պարզ և բաղադրյալ, ուստի հասարակ անուն > հատուկ անուն տեղաշարժերով հասարակ անունները փոխանցվել են թե՛ պարզ, թե՛ բաղադրյալ հատուկ անուններին:

Պարզ հատուկ անուններին փոխանցված հասարակ անուններն ունեն պարզ կազմություն: Հասարակ անունը հատուկին փոխանցվելիս կարող է հնչյունափոխվել,

⁹ Հ., Բարսեղյան, Հատուկ անուն, Ե., 1964, էջ 57:

հոլովվել, ենթարկվել հնչյունի հավելման, ենթարկվել հնչյունի անկման, գործածվել հոգևակի թվով:

Պարզ հատուկ անվանը փոխանցված հասարակ անունը նրա արմատական ձևն է, իսկ բաղադրյալ հատուկ անվանը փոխանցված հասարակ անունը անվանակազմական հիմքն է, առանց որի հատուկ անունը չի կազմվի:

Կան երեք կարգի անվանակազմական հիմքեր դրանք են՝ **անձանվանակերտ հիմքեր**, որոնք մասնակցում են ածանցավոր և բարդ անձնանունների կազմությանը, **տեղանվանակերտ հիմքեր**, որոնցով կազմվում են ածանցավոր և բարդ տեղանունները, **ազգանվանակերտ հիմքեր**, որոնցով կազմվում են հայերենի ազգանունները:

Հատուկ անունները կարող են փոխանցվել կազմությամբ պարզ, ածանցավոր և բարդ հասարակ անուններին:

Ածանցավոր հատուկ անունները բաժանում ենք երկու խմբի, դրանք են՝
ա. անուններ, որոնք հատուկ տեսակին փոխանցվել են հասարակ գոյականներից, ինչպես՝ Տիրուհի, Այգեստան, Տանձուտ, Եղեգնուտ, Մարտիկ, Ռազմիկ և այլն
բ. անուններ, որոնք կազմված են հասարակ գոյական անվանակերտ հիմքով և անվանակերտ ածանցներով:

Հայերենում անձնավանակերտ ածանցների դեր են կատարում - **իկ** փոքրացուցիչ փաղաքշական, - **ուհի**, - **ինե** իգանակերտ վերջածանցները:

Անվանակերտ հիմք+անվանակազմիչ ածանց կաղապարով են կազմված Արծվիկ, Շնորհիկ, Լեռնուհի, Բերկրուհի, Գառնիկ < Լուսինե, Արփինե և այլն:

Այսպես են կազմվում նաև մի շարք ածանցավոր տեղանուններ: Որպես տեղանվանակերտ՝ ածանց գործառվում են - **իկ**, - **ակ**, - **արան**, - **ուտ** գոյականակերտ վերջածանցները: Օրինակ՝ ճամբարակ, Գոգարան, Տանձուտ, Մեղրուտ, Հացիկ և այլն:

Կազմությամբ բարդ հատուկ անունները նույնպես բաժանում ենք երկու խմբի
ա. անուններ, որոնք առաջացել են կազմությամբ բարդ հասարակ անունների անմիջական փոխանցման ճանապարհով և լեզվում գոյություն ունեն որպես հասարակ գոյականներ, Չորապետ, Հայրապետ, Լուսերես, Վարդերես, Ոսկեհատ անձնանունները և Լուսակերտ, Սարալանջ, Լեռնահովիտ, Գետամեջ, Արշալույս¹⁰ և այլն:

բ. անուններ, որոնք կազմվել են երկու և ավելի հասարակ անունների համադրությամբ և որպես հասարակ գոյականներ լեզվում գոյություն չունեն, ինչպես՝ Շողակաթ,

¹⁰ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա. Ե., 1971, 330:

Չայարփի, Սիրվարդ, Խաչերես, Լանջաղբյուր տեղանունները և այլն:

Չասարակ անունների փոխանցմամբ կազմված բաղադրյալ հատուկ անուններին անդրադառնալիս առանձնացվում են ազգանունները, որոնք իրենց կառուցվածքով տարբերվում են և՛ անձնանուններից, և՛ տեղանուններից: Չայերենի ազգանունները բաղադրյալ կազմություններ են և սերում են ազգանվանակերտ + հիմք + ազգանվանակերտ հիմք գործառում են թե՛ հատուկ (անձնանուններ, տեղանուններ), թե՛ հասարակ գոյականները: Չայերենի ազգանվանակերտ ածանցներն են՝ **ունի, եցի, ացի, ցի, եց, աց, ունց, յան**, որոնք դրվելով ազգանվանակերտ հիմքերի վրա, կազմում են ազգանուններ¹¹:

Չասարակ գոյականներից փոխանցված ազգանվանակերտ հիմքերն իրենց կազմությամբ լինում են՝ պարզ, ածանցավոր և բարդ:

Պարզ են՝ Բակունց, Ատունց, Խաչունց,

ածանցավոր են՝ Ոսկերիցյան, Ներկարարյան, Լուսիկյան,

բարդ են՝ Մայրապետյան, Չայկազունի, Մարգալետունի, Զարտաշյան, Զեշիշօղյան և այլն:

Կազմությամբ պարզ հասարակ անունները փոխանցվել են հատուկներին թե՛ անփոփոխ և թե՛ փոփոխված ձևով, ինչի հետևանքով էլ ունենք կազմությամբ պարզ անձնանուններ և տեղանուններ:

Լեզվում մեծ թիվ են կազմում բաղադրյալ հատուկ անունները որոնք առաջացել են երկու ճանապարհով.

ա) հատուկ անվանն է փոխանցվել անմիջապես հասարակ (ածանցավոր կամ բարդ) անունը,

բ) հասարակ անունն անվանակազմական հիմք է հանդիսացել ածանցման կամ բառաբարդման ճանապարհով հատուկ անուն կազմելու համար:

Կան անվանակազմական երեք կարգի հիմքեր

ա) անձանվանակերտ

բ) տեղանվանակերտ

գ) ազգանվանակերտ

Ըստ ծագման՝ բոլոր հատուկ անունները կարող ենք խմբավորել **բնիկ** և **փոխառյալ** տեսակների:

Բնիկ են այն հատուկ անունները, որոնք ստուգաբանվում են տվյալ լեզվով, կազմված են նրա արմատներով և ածանցներով: Բնիկ հայկական անուններն ունեն իրենց անուղղակի իմաստները ինչ-որ բան նշանակում են, իսկ օտար անունները՝ ոչ:

¹¹ Տ. Ավետիսյան, Հայկական ազգանուն, Ե., 1987, էջ 223:

Յրաչյա Աճառյանը գտնում է, որ պարզելու համար, թե որևէ անուն օտար է, թե հայկական պետք է դիմել նրա ստուգաբանությանը:

Փոխառյալ հատուկ անունները, իրենց մայր լեզվում ծագելով հասարակ անուններից և կորցնելով իմաստային կապն իրենց նախնական ձևի հետ, հայերենին են փոխանցվել արդեն իսկ որպես զուտ պայմանական անվանումներ: Սա նշանակում է, որ հայերենը որևէ այլ լեզվից փոխառել է ոչ թե հասարակ անունը, ապա այն փոխանցել հատուկին, այլ փոխառել է միանգամից հատուկ անունը՝ չանդրադառնալով նրա ստուգաբանական իմաստին¹²: Օրինակ՝ **Յակոբ** եբրայերեն նշանակում է <<խաբեբա>> և իմանալով անվան ծագումն ոչ ոք իր զավակին **Յակոբ** չէր անվանի: Կամ էլ դստերը ոչ ոք Շաքե չէր կոչի, քանի որ դա թուրքերեն բառ է և նշանակում է <<դժբախտ>>:

Ուսումնասիրելով հասարակ գոյականներից տեղանուններին կատարված տեղաշարժերը՝ կարող ենք եզրակացնել.

1. Տեղանուններն առաջացել են հասարակ անուններից՝ հասարակ անուն>հատուկ անուն փոխանցման ճանապարհով:

2. Հասարակ անունը, փոխանցելով տեղանվանը, կարող է դառնալ.

ա) կազմությամբ պարզ անուն (եթե ինքը՝ հասարակ անունը, նույնապես կազմությամբ պարզ է) ,

բ) անվանակազմիչ հիմք՝ բաղադրյալ կազմություն ունեցող տեղանունների համար:

3. Հասարակ գոյականները՝ որպես տեղանվանական հիմքեր, մասնակցում են ածանցավոր և բարդ (համադրական, վերլուծական) կազմություն ունեցող տեղանունների ձևավորմանը:

4. Բաղադրյալ տեղանուններում դիտվում են անհյունափոխ և հնչյունափոխված հիմքերով, հոդակապավոր և անհոդակապ, երկբաղադրիչ և եռաբաղադրիչ, համադրական և վերլուծական կազմություններ:

Յայերենում քիչ չեն տեղանուններից փոխանցված ազգանվանակերտ հիմքերը:

Յայկական ազգանուններում տեղանունների կիրառությունը գալիս է հնուց: Դեռևս IV դարում թե՛ բարձր դասը, թե՛ հեզևորականությունը անձնանվան զուգահեռ կիրառում էին այն տեղանունը, որտեղ ծնվել էին, բնակվում էին, կամ կրթություն էին ստացել, օրինակ՝ Գրիգոր Նարեկացի, Սահակ Պարթև, Մովսես Խորենացի, Սարգիս Տայեցի, Ղևոնդ Վանանդեցի, Մկրտիչ Մեծոփեցի, Կոստանդին Երզնկացի, Ղազար Փարպեցի և այլն¹³:

¹² Ռ. Ջուլֆայան, Գոյականի բառաբերականական ներխուսքիմասային տեղաշարժերը հայերենում, էջ 67:
¹³ Ռ. Ջուլֆայան, Գոյականի բառաբերականական ներխուսքիմասային տեղաշարժերը հայերենում, էջ 113:
12

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Բաղադրյալ հատուկ անունների ուսուցումը հանրակրթական դպրոցում

2.1 Հանրակրթական դպրոցի հայոց լեզվի ծրագրում թեմայի ուսուցմանը ներկայացվող պահանջները

Ընդհանուր միջնակարգ կրթության համակարգում մայրենի լեզուն առանձնահատուկ տեղ ունի իր դերով ու նշանակությամբ. մի կողմից՝ որպես աշխարհաճանաչողության, անձի ձևավորման, նրա մտավոր առաջընթացի, վերլուծական և պատկերավոր մտածողության զարգացման հիմնական միջոց, մյուս կողմից՝ ուսումնական մնացած բոլոր առարկաների ընկալման և յուրացման հիմք: Գաղտնիք չէ, որ մայրենի լավ իմացությամբ կարելի է հասնել օտար լեզուների պատշաճ յուրացմանը¹⁴:

Մայրենի լեզվի, ինչպես նաև գրականության ուսուցումը բացառիկ նշանակություն ունի անհատի ու քաղաքացու բարոյական կերպարի ձևավորման գործում, ուստի հայոց լեզվի և գրականության դպրոցական դասընթացը, բուն լեզվական ու գրականագիտական գիտելիքներ տալուց բացի, պետք է գաղափար մշակի ժողովրդի կյանքում և նրա ազգային նկարագրի ձևավորման գործում մայրենի լեզվի ու գրականության դերի վերաբերյալ:

Լեզվի ուսուցման հիմքում ընկած տեսականն ու գործնականը պետք է սերտ շաղկապված լինեն, ներհյուսված այնպես, որ տեսական նյութի յուրացումը անալոգիաներով կատարվի գործնական աշխատատանքների միջով:

Լեզվի գործնական ուսուցման նպատակադրումը պահանջ է ներկայացնում ուսուցման մեջ առանձնահատուկ տեղ տալու բառին ու նրա իմաստին, ճիշտ բառօգտագործմանը, բառերի իմաստային և քերականական կապակցելիությանը, բառերի փոխաբերական կիրառությանը, նախադասությունների կառուցման մեջ բառերի և բառաձևերի դերին: Սա նպաստում է կապակցված խոսք կազմելու հմտությունների ձևավորմանը, բառապաշարի հարստացմանը, այնպես էլ սովոր-

¹⁴ Փ. Մեյթիխանյան, Հայոց լեզու, Ուսուցչի ձեռնարկ, 7-9-րդ դաս. համար, Ե. 2011, էջ 4:

րողների ճանաչողական կորոշությունների, աշխարհընկալման, տրամաբանական մտածողության զարգացմանը, հասկացական դաշտի ընդլայնմանը:

Քերականության ուսուցումը պետք է հանգեցվի ոչ թե քերականական կանոնները,

սահմանումները, հոլովման ու խոնարհման հարացույցները և այլն անգիր անելուն, այլ քերականական ձևերը խոսքում ճիշտ և նպատակահարմար կիրառելուն: Ելնելով այս նպատակից՝ զուտ տեսական գիտելիքները կարելի է պակասեցնել՝ շեշտը դնելով լեզվական միավորների հաղորդակցական և ոճա-կան արժեքի վրա: Ուսուցման ողջ ընթացքում պետք հետևողականորեն զարգացնել աշակերտների դիտողական, զննական կարողությունները, իսկ դրա համար պետք է օգտագործել գծապատկերներ, նկարներ, աղյուսակներ, տարբեր տեսաֆիլմեր, կազմակերպել էքսկուրսիաներ: Այստեղ շատ կարևոր է ուսուցչի դերը¹⁵: Հանրակրթական դպրոցում հայոց լեզվի և գրականության ուսուցման հիմնական խնդիրն է զարգացնել սովորողների լեզվագործածական ունակությունները՝ հասարակական կյանքում լիարժեք հաղորդակցվելու նպատակով:

Մայրենի լեզուն դպրոցական կրթության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ այն միաժամանակ և՛ ուսումնասիրության առարկա է, և՛ մյուս առարկաների յուրացման միջոց: Մայրենի լեզվի՝ որպես դասավանդման առարկայի, մյուս յուրահատկությունն այն է, որ նա ներառում է երկու կողմ՝ բուն լեզվի իմացություն, այսինքն՝ այդ լեզվով հաղորդակցվելու, տարբեր բնույթի գրավոր ու բանավոր շարադրանք ստեղծելու կարողություն, և լեզվի քերականական կառուցվածքի իմացություն, որը ենթադրում է տեսական լեզվաբանական գիտելիքներ: Միջնակարգ դպրոցում հայոց լեզուն առարկայի դասավանդումը զուգակցում է այս երկու կողմերը, սակայն առաջնությունը տրվում է լեզվի գործնական կիրառության (լսելու, խոսելու, կարդալու, գրելու) կարողությունների զարգացմանը, իսկ տեսական գիտելիքները տրվում են նվազագույն չափով, որքանով դրանք կարող են նպաստել նշված խնդրի լուծմանը: Դա հատկապես վերաբերում է տարրական դպրոցին, որտեղ լեզվական-քերականական գիտելիքները ուսուցանվում են առավելապես գործնական ճանապարհով, առանց գիտական սահմանումների: Դասավանդման գործնական ուղղվածությունն ապահովելու համար լեզվական նյութի ուսուցումը ուղղախոսական, ուղղագրական, քերականական գիտելիքների հաղորդումից բացի և ավելի մեծ չափով պետք է պարունակի հատուկ տիպի

¹⁵ Փ. Մեյթիխանյան, Ուսուցչի ձեռնարկ ,Ե., 2011, էջ 4:

բնագրեր, խոսքի օրինակելի նմուշներ, գործնական բնույթի վարժություններ ու հանձնարարություններ, որոնք և պետք է զարգացնեն բազմապիսի խոսքային իրադրություններում սովորողների հաղորդակցական կարողությունները, բազմազան թեմաների շուրջ ինքնուրույն բանավոր ու գրավոր խոսք կառուցելու հմտությունները, իրենց մտքերը, գիտելիքները, հույզերն ու զգացումները ազատորեն և լեզվաոճական ճիշտ ձևավորումով արտահայտելու ունակությունները: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ժամանակակից հայերենում զգալի խզում կա գրական և խոսակցական տարբերակների միջև, ուսուցման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել դրանց մերձեցմանը, ձգտելով, որ սովորողները տիրապետեն քերականորեն ճիշտ կառուցված, բնական խոսքին՝ խուսափելով մի կողմից օտարաբան, բարբառային, ժարգոնային, հասարակաբան արտահայտչաձևերից, մյուս կողմից՝ խիստ գրքային, հնացած, շինծու բառերից ու արտահայտություններից, գրասենյակային ոճերից ու կառուցվածքներից, որ հաճախ տեղ են գտնում ուսումնական նյութերում¹⁶: Պետք է ձգտել, որ սովորողները կարողանան իրենց խոսքը կառուցել ոճականապես չեզոք, համագործածական բառերով ու ձևերով, եթե չկա որոշակի խոսքային իրադրության մեջ առանձնահատուկ ոճական կամ հուզաարտահայտչական նպատակադրում: Սրանով կհաղթահարվի հոգեբանական այն դժվարությունը, որ հաճախ ունենում են երիտասարդները գրական հայերենով խոսելիս: Լեզվական տարբեր իրողություններ ուսումնասիրելու նյութ է ծառայում տեքստը, որի մեջ են դրսևորվում, փոխադարձ կապերի ու կախվածությունների մեջ երևում լեզվական – քերականական առանձնահատկություններն ու օրինաչափությունները: Լեզվի ուսուցման այս մոտեցումը հնարավոր է դարձնում ցույց տալ, թե լեզվական յուրաքանչյուր միավոր ինչպես է մաս դառնում ամբողջի, մասնակցում խոսքակազմությանը, և ինչպես ամբողջը կարելի է մասնատել՝ լեզվական համեմատաբար ծավալուն միավորներից մինչև նվազագույնը: Լեզվի գործնական ուսուցման նպատակադրումը պահանջ է ներկայացնում ուսուցման բովանդակության մեջ առանձնահատուկ տեղ տալու բառին ու նրա իմաստին, ճիշտ բառօգտագործմանը, բառերի իմաստային և քերականական կապակցե-լիությանը, բառերի փոխաբերական կիրառությանը, նախադասությունների կառուցման մեջ բառերի և բառաձևերի դերին: Քերականության ուսուցումը պետք է հանգեցվի ոչ թե քերականական կանոնները, սահմանումները, հոլովման ու խոնարհման հարացույցները և այն անգիր անելուն, այլ քերականական ձևերը խոսքում ճիշտ և նպատակահարմար կիրառելուն: Ելնելով այս նպատակից, զուտ

¹⁶ ՀՀ Կրթության և գիտության նախարարի N 1153- Ա/ք հրամանի հիմնական դպրոցի առարկա-յական չափորոշիչներ և ծրագրեր, հայոց լեզու և գրականություն, 2007, էջ 30:

տեսական լեզվաբանական տեղեկություններ կարելի է հասցնել նվազագույնի, շեշտը դնելով լեզվական միավորների հաղորդակցական և ոճական արժեքի վրա: Առաջնահերթ նշանակություն ունեն ուսումնական գործունեության ձևերը, որոնք պետք է հնարավորություն տան զարգացնելու սովորողների խոսքային կարողությունները՝ կախված կոնկրետ իրադրությունից, խոսողի նպատակից, ունկնդիրների (լսարանի) առանձնահատկություններից և այլ հանգամանքներից: Կարևոր նշանակություն ունեն դասագրքերում զետեզված տեքստերի բնույթը, տեքստային աշխատանքի ձևերի և հարակից առաջադրանքների ու վարժությունների տեսակները: Առաջադրանքներն ու վարժությունները պետք է ուղղված լինեն ինքնուրույն աշխատելու հմտությունների ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը և ոչ միայն մեխանիկական մտապահմանն ու վերարտադրմանը: Դրանք պետք է պարունակեն աշխարհաճանաչողական գիտելիքներ և նպաստեն ձևավորելու սովորողների արժեքային համակարգը, որոնք դպրոցական կրթության կարևոր բաղադրիչներն են: Հայոց լեզվի դասընթացը նախատեսում է, որ լեզվական նյութի ուսուցումից բացի սովորողներին պետք է գիտելիքներ հաղորդվեն հայ ժողովրդի կյանքում մայրե-նի լեզվի դերի, նրա զանազան գործառույթների, հայոց լեզվի բնույթի, նրա պատմական զարգացման փուլերի, գրական և բարբառային տարբերակների վերաբերյալ¹⁷:

Անհրաժեշտ տեղեկություններ պետք է տրվեն աշխարհում հայոց լեզվի տարածման, հայերենի ուսումնասիրության պատմության, հայ և օտարազգի նշանավոր հայագետների մասին: Ուսումնական նյութերի ու բնագրերի հատուկ ընտրությամբ պետք է շեշտվի մայրենի լեզվի նշանակությունը ազգա-պահպանության գործում, հայոց լեզուն բնորոշվի որպես հայ ժողովրդի հարատևման, նրա ազգային ինքնության պահպանման գրավական և ազգային մշակույթի բարձրագույն ձև, գաղափար տրվի անհատի և հասարակության կյանքում, ինքնաճանաչման և աշխարհընկալման մեջ մայրենի լեզվի նշանակության մասին: Լեզվական ուսուցումը կատարվում է գործնական եղանակով: Միջին դպրոցում հայոց լեզվի ծրագրային նյութերն ըստ դասարանների բաշխվում են հետևյալ կերպ՝ հնչյունաբանություն, ուղղախոսություն, ուղղագրություն՝ 5-րդ դասարան, բառագիտություն, դարձվածաբանություն և բառակազմություն՝ 6-րդ դասարան, ձևաբանություն՝ 7-8-րդ դասարաններ, շարահյուսություն՝ 8 – 9-րդ դասարաններ: Միաժամանակ, յուրաքանչյուր դասարանում որոշակի ժամաքանակ է հատկացվում կապակցված խոսքի, ոճագիտության և գործնական գրությունների ուսուցմանը, որոնք նախորդ ծրագրերում հիմնականում

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 30:

